ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՑՐ ՏԱՃԱՐՈՒՄ "ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ" ԱՌԹԻՎ

(9 Հունիս 1996)

"Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն":

"Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա":
Իջավ Միածինը Հոր կողմից և Նրա հետ իջավ փառքի լույսը (Շարական) :

Այսօր Հայաստանյայց եկեղեցին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի տոնախմբում է Սուրբ Էջմիածնի Կաթողիկե Մայր Տաճարի հիմնադրության տոնը, որպես արդյունք Ս. Գրիգոր Լուսավորչի փառավոր տեսիլքի:

Անցնող շաբաթը հայ հավատացյալների համար եղավ հոգևոր վերազարթոնքի, Հայ Եկեղեցու երկրորդ Լուսավորչի՝ Ս. Գրիգորի կյանքի արժանահիշատակ դրվագների վերապրումի և վերահիշատակության մի շաբաթ: Եկեղեցու հիմնադրությունից մի քանի օր առաջ տոնախմբեցինք մեր հռոմեական սրբերի՝ Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերի, Սուրբ Հովհաննու Կարապետի, Շողակաթի հիշատակի օրը: Երեկ, շաբաթ օր, տոնեցինք մեր հավատի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապի բանտից ազատվելու տոնը:

Անցնող ամբողջ շաբաթվա ընթացքում հավատացյալների հոգի բազմությունը էջմիածին քաղաքի մայրավանքում, մյուս վանքերում և Խոր Վիրապի վանքում իր աղոթքն էր երկինք առաքում՝ արժանանալու համար այն տեսիլքին, որ Աստված շնորհել էր մեր ժողովրդին՝ Հայաստան աշխարհի տեր ու պահապան Սուրբ Գրիգոր Լուսավորչի միջոցով:

Այսօր մեր եկեղեցին տոնում է հիշատակը Լուսավորչին շնորհված փառավոր աստվածային տեսիլքի, որը հրաշափառ և եզակի մի երևույթ է Հայ Եկեղեցու և ժողովրդի կյանքում:

Ինչպես հոգեգալուստը վերնատանը Սուրբ Հոգով լցրեց բոլոր առաքյալների էությունը, այնպես էլ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը Սուրբ Հոգով լցրեց մեր ողջ ժողովրդին, որպեսզի այդ շնորհով Հայաստանյայց եկեղեցին ամրապես խարսխվի Հայաստանում՝ Սուրբ Էջմիածնով, և հայ ժողովուրդը քրիստոնեությունն ընդունի իբրև իր պետության և երկրի կրոնը:

Երեկ հիշատակի օրն էր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապի բանտից դուրս գալու և միաժամանակ նրա կատարած հրաշք բժշկության: Հայոց Տրդատ Գ թագավորը իր կատարած անօրենության և մեղքերի պատճառով անասնակերպ էր դարձել: Նրա քույրը՝ Խոսրովիդուխտը, տեսիլքներ տեսավ: Ըստ այդ տեսիլքների միայն Գրիգորն էր կարողանալու բժշկել հիվանդ արքային: Արքան հոգեկան ներքին տվայտանքներից ալեկոծ փախել ու գնացել էր երասխ գետի ափերը և այնտեղ հոգեխռով թավալվում էր ճահճուտների մեջ:

Համածայն Խոսրովիդուխտի տեսիլքի, Գրիգորն ազատվեց Խոր Վիրապից:

Նա շուրջ տասնեհինգ տարի, իբրև մահվան դատապարտված, մնացել էր այդ Վիրապում: Աստծու երեշտակը, պառավ կնոջ կերպարանքով, ամեն օր նրան մի նկան հաց էր տարել և մի փարչ ջուր: Աստվածային նախախնամությամբ թեև նա երկար տարիներ անցույց այդ գրի մեջ գերեզմանվել, բայց ողջ էր մնացել: Ահա՝ Աստծու կատարած մեծագույն հրաշքներից մեկն է այս ևս:

Երկրորդ հրաշքը անասնակերպ դարձած Եիվանդ արքայի բժշկումն էր: Գրիգորն իր հավատով բժշկեց Եիվանդ արքային, ապա Սուրբ Հոգով մկրտեց արքայական ընտանիքի անդամներին և բոլոր իրեն հավատացողներին:

Այդ օրվանից Հայաստանը իր պետությամբ, ժողովրդով ու ավագանիով դարձավ քրիստոնյա: Գրիգոր Լուսավորիչը գրից ազատվելուց հետո քարոզչական մեծ գործունեություն ծավալեց Հայաստանում: Ամենուր քարոզություններ սկսվեցին: Լուսավորչական աշխատանքը չմնաց միայն պալատի շրջապատում, այլ ընդգրկեց ժողովրդական լայն խավերին: Աստծու հանդեպ հավատը, քրիստոնեության լույսը տարածվեց հայոց աշխարհում ու նրա սահմաններից դուրս:

Գրիգորն ուներ մի մեծ երազ, մի մեծ իղձ: Դա ևս աստվածային հրաշագեղ տեսիլքով շնորհվեց նրան:

Նա ամեն գիշեր դուրս էր գալիս պալատի սահմաններից և այգիների մեջ, հնձանների մոտ ծնկի էր գալիս և աղոթում առ Աստված, որպեսզի արժանանա Աստծուն տեսնելու շնորհին: Բարին Աստված լսեց հայոց բազմաչարչար Հայրապետի աղոթքը և կատարեց նրա ցանկությունը: Մի օր, ինչպես Ագաթանգեղոս և Բուզանդ պատմիչները են վկայում, կեսգիշերից հետո, երբ աստղերը սկսեցին նվազել, երկնքի դռները բացվեցին և այնտեղից աստվածային լույսը հորդեց դեպի աշխարհ, հոսքը լույսի՝ դեպի Վաղարշապատ քաղաք: Եվ այդ լույսի մեջ ինքը՝ Քրիստոս, ոսկե մուրճը ձեռին իջավ երկնքից երկիր, աշխարհն Այրարատյան, հենց այս վայրը, ուր դուք այժմ կանգնել եք: Այս վայրը սրբազնասուրբ վայրն է ողջ աշխարհում ապրող հայության և Հայաստանյայց եկեղեցու զավակների համար: Իջավ Աստվածորդին և Սանդարամետի՝ դժոխքի դռները հավիտյան փակեց՝ իր ոսկե մուրճով երբեմն անգամ հարվածելով դրանց, որպեսզի ստանան Հայաստանում այլևս չգործի: Ապա դառնալով աղոթողին՝ Գրիգորին, ասաց. "Այստեղ ինձ համար կառուցիր իմ աղոթքի տունը": Այդ պահին Գրիգորը լուսեղեն շողերով տեսավ պատկերը այս սուրբ տաճարի: Ի՜նչ հրաշափառ տեսիլք: Կա՞ արդյոք աշխարհում մի քրիստոնյա ժողովուրդ, որ արժանացած լինի սրանից ավելի գեղեցիկ տեսիլքի: Կա՞ արդյոք աշխարհում մի քրիստոնյա ազգ, որ իր երկրի մեջ Հիսուսի էջքին արժանացած լինի:

Հիսուսի էջքը մեր երկիր հետևյալ խորհուրդն է ևս բովանդակում: Մենք՝ հայերս, Հիսուսի նման մեր ուսին առած մեր խաչը, բարձրացել ենք մեր պատմության ուղիներով՝ դեպի Գողգոթաներ, այնտեղ բազմիցս խաչվելով հարություն ենք առել: Մեր ժողովուրդը իր կյանքով ու պատմությամբ, իր անցյալով ու ներկայով ապացուցել է, որ արժանի է Քրիստոսի սիրուն և քրիստոնեական իր դարավոր կրոնին:

Ինչպես Քրիստոս իր սուրբ-արյան հեղումով փրկեց մարդկությանը, խաչվեց, թաղվեց բայց վերատին հարյավ, նույնպես և հայ ժողովուրդը թեև բազմիցս սպանդի ենթարկվեց, բազմիցս հալածվեց, նույնիսկ ցեղասպանության ենթարկվեց, բայց կրկին անգամ իր անցյալից հառնեց, վերակենդանացավ: Ներկա օրերի մեր պետությունը, մեր անկախությունը, մեր սիրելի աշխարհը Հայաստան,

ամենաակնառու փաստն են և վկայությունը մեր քրիստոնեական հավատի անմահության:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տեսիլքը տեսնելու հաջորդ առավոտյան այցելեց Հայոց Տրդատ արքային և նրան նկարագրեց այն, ինչ իրեն հայտնվել էր: Եվ նրանք հաջորդ օրվանից սկսեցին կառուցել այս սուրբ Տաճարը: Այս սուրբ Տաճարը կառուցվեց դարերի ընթացքում և կառուցվում է նման մեր ժողովրդի հոգու տաճարին, որը հավիտենապես կառուցվում է իր ժողովրդի սխրագործություններով:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, թեև Հայոց Հայրապետական Աթոռը պատմության ընթացքում եղավ աստանդական, նա տասը տարբեր մայրաքաղաքներ շրջեց, սակայն երբեք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ հավերժական տեսիլքը Սուրբ Գրիգոր Լուսավորչի, իր պատմական վայրից չխախտվեց, տեսիլքը մնաց այստեղ:

Անհիշտ է այն կարծիքը, թե Հայոց Եկեղեցին երկու գլուխ ունի: Հայոց Եկեղեցին մեկն է, այն հաստատվել և գոյատևում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնյալ, աստվածահաճո հովանավորությամբ և գլխավորությամբ՝ ամրացած Սուրբ Գրիգոր Լուսավորչի դարեր իմաստավորող տեսիլքով և Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փառավոր, օրհնյալ էջքով Հայաստան:

Հայ Եկեղեցու երկգլուխ, կամ պատմության ընթացքում երբեք կամ չորս Աթոռ ունենալու մասին կարծիքները հիմք չունեն, պատմությունը ինքն է ուղղում կատարված սխալները և պետք է իմանանք, որ Աստվածորդին ի սեր հայ ժողովրդի և ի պատասխան Սուրբ Գրիգորի իջել է կենտրոնը հայ ժողովրդի սրտի՝ ի Վաղարշապատ քաղաք:

Այսօր ցնծանք ուրախությամբ, որովհետև Ս. Էջմիածնի կաթողիկեի՝ ընդհանրական եկեղեցու հիմնադրության տոնն է: Այսօր Մայր Տաճարում գտնվողներս նմանվում ենք վերնատանը սպասող Հիսուսի առաքյալներին և աշակերտներին: Այսօր Աստվածորդին խորհրդանշորեն վերստին իջնելու է այստեղ՝ Իր բազում շնորհներով մեզ զարդարելու համար և տալու է մեզ առաքելական շունչ ու հոգի, որպեսզի ծառայենք մեր հավիտենական Տիրոջը:

Ահավասիկ մոտենում է 2001 թվականը, երբ մեր Եկեղեցին Ս. Էջմիածնի հիմնադրության 1700-ամյակը պիտի տոնի: Մենք հոգեպես պետք է պատրաստվենք այդ փառավոր տարեդարձը դիմավորելու և արժանավորապես տոնելու համար այն, որքան հնարավոր է մեր նյութական և բարոյական աջակցությամբ սատարենք նշանավոր այդ տարեդարձի տոնակատարության կազմակերպմանը:

Մենք դեռ աշխարհին և մարդկությանը պիտի ապացուցենք, թե որքան ամուր ու հաստատուն է մեր հավատը, և ինչո՞ւ Աստվածորդին նախընտրեց իջնել իրենով սրբացած այս վայրը՝ Ս. Էջմիածին:

Թող Սուրբ Գրիգորի տեսիլքում այստեղ իջած Փրկիչը այսօր ևս իջնի ու իր անկողոպտելի շնորհներով զարդարի մեր ժողովրդին ու երկիրը, այժմ և հավիտյանս, ամեն: